«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»

խմբագրության

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը ողջունում է ձեզ «Պատմա-բանասիրական հանդեսի» հրատարակության 25-ամյակի կապակցությամբ:

Քառորդ դար է արդեն, որ ձեր պարբերականը հաջողությամբ լուսաբանում է հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, արվեստի, փիլիսոփայության և մշակույթի այլ բնագավառների հարցերը, հայագիտության, կովկասագիտության և ընդհանուր բանասիրության տեսական կարևոր խնդիրները, ինչպես նաև Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կապերն ու փոխհարաբերությունները հարևան երկրների հետ: Խմբագրությունը կարողացել է իր շուրջը համախմբել սովետական և արտասահմանյան առաջավոր գրեթե բոլոր հայագետներին, որի շնորհիվ «Պատմա-բանասիրական հանդեսը» դարձել է հայագիտական ծանրակշիռ գիտական օրգան և ստացել միութենական ու համաշխարհային ճանաչում:

Մաղթելով ձեզ նոր հաջողություններ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը հույս է հայտնում, որ «Պատմա-բանասիրական հանդեսը» այսուհետև ևս զգալի ավանդ կունենա ժամանակակից հայագիտության զարգացման գործում:

Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ
ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս քարտուղար
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

1982 թ.

1 դեկտեմբերի